«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից –Փ-գ Կարապետ Համբարձումյան

Ղեկավար—*փոխգնդապետ*՝ Արտակ Իսահակյան

Թեմա – «Զինղեկի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման եվ մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով»

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ.1 Զինղեկի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման եվ մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

1.1 Ուսուցիչների համագործակցությունը դպրոցում՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման միջոց.....5

1.2 Զինղեկի փոխգործակցությունը դպրոցի առարկայական մասնախմբերի շրջանակներում, ինտեգրված դասերի կազմակերպում.....10

1.3 Զինղեկների համագործակցության օրինակներ.....15

Եզրակացություններ.....17

Առաջարկություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտի արդիականությունը պայմանավորված է նոր ժամանակի հրամայականներին համապատասխան որակի կրթություն ունենալու անհրաժեշտությամբ: Սա մի գործընթաց է, որն ուղղված է կրթական բոլոր ոլորտներում իրականացնել շարունակական բարեփոխումներ, որոնց թվում են նաև ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացումն ու նրանց ժամանակակից մանկավարժամեթոդական հնարներով զինումը:

Այդ նպատակին հասնելու համար ուսուցիչը չի կարող սահմանափակվել ինքնուրույն գործունեությամբ. ինքնակրթության, ինքնազարգացման գործընթացներին գալիս են փոխլրացնելու աշխատանքային համագործակցությունը այլ մանկավարժական աշխատողների հետ, ինչը նպատակ ունի ամբողջացնել ու համակարգել ողջ մանկավարժական ներուժը:

Ժողովրդական իմաստությունն ասում է՝ «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես»: Սա կարելի է դիտարկել որպես նախաձեռնության կարգախոս, որը կենսունակ է ոչ միայն ուսուցիչների համագործակցության, այլ նաև կրթական համակարգի այլ շահառուների համագործակցության պարագայում, օրինակ՝ սովորող-ուսուցիչ, ծնող-դպրոց: Կարելի է եզրահանգել, որ ցանկացած միջավայրում փոխօգնությունը, համագործակցությունը, օրինակելի փորձի փոխանակումը, այդ փորձի հիման վրա սեփական քայլերի մշակումը այն սկզբունքներն են, որոնց հիման վրա կարելի է կառուցել առողջ ու բարենպաստ միջավայր համագործակցության միջոցով բարեփոխումներ կատարելու համար:

Այսպիսով, ուսումնական հաստատությունում շատ կարևոր ենք համարում մանկավարժական աշխատողների միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումը, որն ուղիղ համեմատական է բարձր արժեքային համակարգ ունեցող, գիտելիքներով ու կարողություններով հարուստ սերունդ ունենալու տեսլականին: Վստահաբար կարող ենք ասել, որ նման պարագայում աշխատանքը դպրոցում կլինի էլ ավելի համակարգված ու արդյունավետ՝գործունեության հիմքում դնելով սովորողների որակյալ ու ժամանակակից կրթություն ստանալու իրավունքը: Այս համատեքստում կարևոր է նաև «ՆԶՊ» ուսումնական առարկայի ուսուցչի՝ զինղեկի համագործակցությունը դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, այլ զինղեկների և զինկոմիսարիատի հետ, որի նմատակն է ուսուցման որակի բարելավման ու արդիականացման համար քայլերի մշակումը:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կրթական համակարգում գործընկեր

ուսուցիչների մեջ համագործակցային ու փոխօգնության առողջ ու կառուցողական միջավայրի ձևավորման անհրաժեշտության կարևորումը՝որպես կրթության որակի բարձրացման միջոց, որով պայմանավորված է ուսումնական գործընթացի բարձր որակը:

Հետազոտության նպատակը: Վերլուծել զինղեկի արդյունավետ փոխգործակցության դերը վերջիններիս մոտ մի շարք կենսական նշանակության կարողությունների ու հմտությունների ձևավորման, նաև մասնագիտական որակների զարգացման համատեքստում:

Հետազոտության խնդիրը:

- Ուսումնասիրել դպրոցում մանկավարժական աշխատողների համագործակցության եղանակները:
- Դիտարկել զինղեկների օրինակելի փորձի փոխանակման ազդեցությունը կրթության որակի բարելավման վրա:
- Ցույց տալ առարկայական ինտեգրման կարևորությունը սովորողների համակողմանի զարգացման վրա և այդ համատեքստում զինղեկի և այլ ուսուցիչների համագործակցության ձևերն ու եղանակները:

ԳԼՈՒԽ 1 ԶԻՆՂԵԿԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

1.1 Ուսուցիչների համագործակցությունը դպրոցում՝ որպես ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կազմակերպման միջոց

Արդի հասարակությունների կարևոր խնդիրներից մեկը կայուն զարգացող, կարողունակ ու նորորար անհատի ձևավորումն է: Դրան հասնելու ճանապարհն, անշուշտ, կրթությունն է: Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման, դարձել է արդի կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը: Այս գործընթացում շատ կարևոր է թե' ուսուցման գործընթացի հիմնական պատախանատուների՝ ուսուցիչների, թե' առաջնային շահակիցների՝ սովորողների դերի համարժեք կարևորումը:

Ինչպես նշեցինք, բարեփոխումներն ուղղված են կրթական համակարգի արդիականացմանը, նոր մարտահրավերներին համապատասխանեցնելուն: Իսկ ի՞նչ են իրենցից ենթադրում այդ մարտահրավերները և ի՞նչ ուղղությամբ է այսօր արդիականացվում կրթությունը: Անշուշտ, դրա հիմնական պատճառներից մեկը մարդկության աննախադեպ առաջընթացն է: Կյանքի ռիթմը փոխվել է, այսօրվա սերունդը ունի այլ հետաքրքրություններ ու պահանջմունքներ, տեղեկատվական հոսքերը դարձել են վերջիններիս հետաքրքրությունները բավարարելու հիմնական աղբյուրը:

Կրթության պահանջների բնականոն իրականացումը մեծապես պայմանավորված է ուսուցչի աշխատանքից. որքան բարձր են վերջինիս մասնագիտական ու մարդկային որակները, ինքնազարգանալու, նորը սովորելու ցանկությունը, այդքան ուսուցիչը շատ բան ունի տալու մատաղ սերնդին: Ուստի կարող ենք ասել, որ կրթական համակարգում հաղթանակներն ու պարտությունները կախված են այդ թվում նաև ուսուցչի աշխատանքից: ՀՀ հանրակրթության մասին օրենքը սահմանում է ուսուցչի և սովորողի իրավունքներն ու պարտականությունները. «Սովորողն իրավունք ունի ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն[1]»: Անշուշտ, այս իրավունքն իրացվում է հանրակրթական դպրոցում, սակայն որքանով է ուսումնառության գործընթացն արդյունավետ, որքանով է այն նպաստում սովորողների մոտ մի շարք կարողունակությունների, համակարգված ու մնայուն

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ հանրակրթության մասին օրենք, հոդված 20, կետ:

գիտելիքի ձեռքբերմանը: Ահա այս հարցադրումների պատասխանն է, որ պահանջում է նոր մոտեցումներ թե' ուսուցչից, թե' սովորողից: Բոլոր ուսուցիչներն իրենց աշխատանքային գործընթացում և մասնագիտական զարգացման ընթացում պետք է կարողանան հաշվի առնել իրենց առարկաների հիմքը, դրսևորել քննադատական մոտեցում, կապել այլ ոլորտների և բնագավառների, ինչպես օրինակ՝ տեխնոլոգիայի ուսուցիչը պետք է առարկան ծառայեցնի սովորողների մոտ մի շարք կենսական նշանակության կարողունակությունների ձևավորմանը, կապի այն այլ առարկաների հետ, ցույց տա առարկայի կարևոր դերը կյանքում, մոտիվացնի, ոգևորի ու խրախուսի սովորողներին: Այն ուսուցիչները, ովքեր ավելի նորարար են, սիրով են կատարում իրենց աշխատանքը, ինքնակրթվում են, քաջատեղյակ են ավելի հետաքրքիր, արդյունավետ և համարձակ դասավանդման մեթոդներին:

Այս պարագայում հավանականությունն ավելի մեծ է, որ վերջիններս կարող են արդյունավետ կազմել իրենց աշխատանքային պլանը, կազմակերպել հետաքրքիր մեթոդներով ու հնարներով հագեցած դասեր, ստեղծել միջառարկայական կապեր, սովորել գործընկերներից ու սովորեցնել՝ ապահովելով սովորողների պահանջմունքները: Նրանք ի վիճակի են կազմել և ընտրել դասավանդման այնպիսի մեթոդներ և միջոցառումներ, որոնց միջոցով համապատասխանաբար զարգացվում են աշակերտների ըմբռնումը և հմտությունները, պատկերավոր ու ստեղծագործական մտածողությունն ու գործնական կարողությունները:

Եթե ուսուցիչն ունի կաղապարված մտածողություն, կառչում է միմյայն դասի ավանդական կաղապարներից, դժվար թե նա ցանկանա նորարարություն մտցնել դասի մեջ: Կարծում ենք, որ սա լրջագույն խնդիր է, և հենց այստեղ է կարևոր ուսուցիչների միջև կառուցողական համագործակցության դերը: Հենց այստեղ է ծագում անհրաժեշտություն, որ դպրոցում ավելի կայացած ու փորձառու ուսուցիչները ամեն կերպ փորձեն նեցուկ լինել սկսնակ կամ ոչ փորձառու ուսուցիչներին՝կիսվելով վերջիններիս հետ իրեն մեթոդամանկավարժական գիտելիքներով, տեղեկատվական հոսքերի կառավարման փորձառությամբ:

Ուսուցիչը և աշակերտը ժամանակակից մանկավարժության մեջ նպատակի իրականացման սուբյեկտներ են, և այդ սուբյեկտների գործունեությունների համաձայնեցումը մանկավարժական հմտության չափանիշներից մեկն է[2]: Հանրակրթական դպրոցի ուսուցիչը պետք է կարողանա հստակ ներկայացնել մի

[2] http://zangak.am/pdf/Mank.mitq/2016/Mankavarzhakan-Mitq-2016-3-4.pdf «Մանկավարժական միտք» հանդես, Տ. Գրիգորյան, «Դասի նպատակի հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ», Երևան, 2016, էջ 107:

շարք հիմնական գաղափարների շուրջ իր տեսլականը, ունենա համապատասխան առարկայական բառապաշար, հստակ մանկավարժական սկզբունքներ, կարողանա կիրառել գործուն հարցադրումներ, ապահովել չափորոշչային վերջնարդյունքները համաչափ: Կարծում ենք՝ հենց այս նպատակներին հասնելու համար է կարևոր, որ ուսուցիչները չդադարեն սովորել, չմերժեն փոխօգնությունը, համագործակցեն ու բանակցեն միմյանց հետ՝ նպատակ ունենալով զարգանալ ու զարգացնել սովորողներին: «Հանրակրթական դպրոցի ուսուցիչը պարտավոր է. հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ[3]»: Փորձի արդյունավետ փոխանակումը և համագործակցությունը դպրոցում կախված է ոչ այնքան ուսուցչի մասնագիտական, որքան անձնային որակներից: Սա պայմանավորված է բարեվարքությամբ, օգնելու պատրաստակամությամբ, էթիկայի նորմերի պահպանմամբ: Ուսուցիչը պետք է ունենա բարձր արժեքային համակարգ, արժանապատիվ վարք ու մասնագիտությանը բնորոշ վեհ մարդկային որակներ, որոնց թվում են՝

- Համբերություն, օբյեկտիվություն, հանդուրժողականություն:
- Քաղաքացիական օրինապաշտություն, քաղաքացու իրավունքներն ու պարտականությունները զուգորդելու գիտակցություն:
- Հարգանք սովորողի, նրա ծնողի, գործընկերների ազատության և իրավունքների նկատմամբ ու դրանք պաշտպանելու պատրաստակամություն և կարողություն:
- Մշտապես ինքնակրթությամբ և ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն:
- Հասարակության մեջ և կրթության ոլորտում գոյություն ունեցող թերությունների դեմ պայքարելու, դրանցից դպրոցը զերծ պահելու գիտակցություն և պատրաստակամություն:
- Էթիկայի նորմերը պահպանելու պատրաստակամություն և գիտակցում:
- Մարդասիրական մղումներ:

Ինչպես նշել էինք, ուսուցիչների միջև մանկավարժական օրինակելի փորձի փոխանակումը կարելի է դիտարկել ուսումնադաստիարակչական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համատեքստում: Այս առումով կարևոր ենք

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ հանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 5:

համարում նորարար ու նախաձեռնող ուսուցիչների դերը: Վերջիններս պետք է բաց լինեն համագործակցության համար, փորձեն ուղղորդել պակաս փորձառու կադրերին: «Ուսուցիչն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[4]»: Հանրակրթական դպրոցում ուսուցիչների համագործակցության գործընթացը պետք է իրականացվի անշահախնդիր, ամեն մեկն այստեղ չպետք է փնտրի անձնական շահ, հիմնական վերջնարդյունքը պետք է սահմանել՝ հաշվի առնելով սովորողի շահը: Այս առումով համագործակցող ուսուցիչները պետք է կարողանան դրսևորել քննադատական մտածողություն սեփական աշխատանքի նկատմամբ, պատրաստ լինեն խնդիրների լուծման թիմային եղանակին, չվախենան առողջ բանավեճից և պահպանեն գործընկերային առողջ ու կառուցողական մթնոլորտ դպրոցում: Կրթական միջավայրի մարտահրավերները կառավարելու, մասնագիտական կարողունակությունները զարգացնելու, ուսուցման տարբեր ռազմավարություններ մշակելու և իրականացնելու ժամանակ շատ կարևոր է համագործակցային միջավայրի ստեղծումը գործընկեր ուսուցիչների համար: Այս առումով առանցքային հանգամանք է, որ ուսուցիչներին միավորի փոխադարձ վստահությունը, թիմային համերաշխությունը, միմյանց աջակցելու ազնիվ մղումն ու պատրաստակամությունը: Աշխատանքային միջավայրում յուրաքանչյուր ուսուցիչ պարտավոր է պաշտպանել ոչ միայն իր, այլև գործընկերոջ հեղինակությունը: Նա չպետք է նսեմացնի գործընկերներին սաների կամ այլ անձանց ներկայությամբ:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կարող ենք պնդել, որ դպրոցում ուսուցիչների միջև համագործակցային հարաբերություններում կարևոր է առողջ գործընկերային միջավայրի ապահովումը, անընդունելի է քննադատության ենթարկվող մարդուն ստորացնելը, հիմնախնդիրները պետք է լուծվեն ուսուցիչների ազատ և բաց քննարկումների միջոցով: «Ուսուցիչը պարտավոր է պահպանել ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները[5]:Նպատակ ունենալով հիմնավորել ուսուցիչների համագործակցության ու փորձի փոխանակման կարևորությունը դպրոցում, նշենք նաև, որ անչափ կարևոր է, որպեսզի ուսուցիչը չկաշկանդվի համագործակցության կամ փորձի փոխամակման ժամանակ:

---

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 7:

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀհանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 8:

1.2 Ձինղեկի փոխգործակցությունը դպրոցի առարկայական մասնախմբերի շրջանակներում, ինտեգրված դասերի կազմակերպում

Մանկավարժական գործունեության ընթացքում արգասաբեր գործելու համար ուսուցիչը պետք է կանոնակարգի ու համակարգի իր աշխատանքը՝ անդադար քայլելով նոր մտքերի, կարողությունների, հմտությունների ու տեխնոլոգիաների հետևից: Նման հնարավորություն ուսուցիչների համար ընձեռում է փոխգործակցային աշխատանքը հանրակրթական ուսումնական հաստատության խորհրդակցական մարմին համարվող առարկայական մեթոդական միավորման ներսում, որտեղ ուսուցիչն ունի անսահմանափակ հնարավորություններ սեփական մասնագիտական պահանջմունքները բավարարելու համար:

Մեթոդական միավորումները ուսումնական հաստատության մեթոդամանկավարժական գործունեության հիմնական կառուցվածքային տարրերն են, որոնք իրականացնում են ուսումնական, դաստիարակչական, մեթոդական և արտադասարանական աշխատանքների համակարգումը դպրոցում: Մեթոդական միավորումների աշխատանքը բազմաբնույթ է: Այն միտված է ուսուցչի մասնագիտական որակների բարձրացմանը՝ խրախուսելով կոլեկտիվում աշխատելու և համագործակցելու վերջինիս ցանկությունը: Առարկայական մեթոդական միավորման բոլոր անդամներն ունեն հավասարազոր իրավունքներ ու պարտականություններ: Իրենց կատարած աշխատանքով վերջիններս հաշվետու են մեթոդական միավորման նախագահին, ով ի պաշտոնե համակարգում է միավորման աշխատանքները՝ դրանք ամփոփելով միավորման նիստերի ժամանակ: Մանկավարժական այս խորհրդի հիմնական առաքելությունը ուսուցիչների մանկավարժական որակների բարձրացումն է, նրանց արդյունավետ համագործակցության համակարգումն ու օրինակելի փորձի փոխանակման հնարավորությունը:

Կրթական գործընթացում ուսուցչի դերը մեծապես վերանայվել է: Նա այլևս բացառապես սովորեցնող չէ, այլև ուղղորդող, համակարգող, կազմակերպող: Հենց այդ պատճառով բարձրացել է որակյալ, ստեղծագործական մտածողություն ունեցող, կարողունակ ու նախաձեռնող, մրցունակ ուսուցչների պահանջարկը , ովքեր ունակ են այս զարգացող աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած ու կարողունակ անձնավորություն: Աշխատանքը մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցչին հնարավորություն կտա արագ ու նպատակային կերպով ձեռք բերել անհրաժեշտ կարողունակություններ, որոնք պարտադիր պայմանն են որակյալ կրթական համակարգ ունենալու համար:

Մեթոդական միավորումների աշխատանքների մեջ իր ուրույն տեղն ունի «ՆԶՊ»-ուսուցիչը: Նա համագործակցում է այլ ուսուցիչների հետ, սովորում ու սովորեցնում, կիսվում իր փորձով և կարգապահության օրինակ է ծառայում : Դպրոցն այնսօր շատ ունի արական սեռի մանկավարժների կարիք: Այս առումով է զինղեկի կատարած դաստիարակչական աշխատանքն ահռելի է: Հատկապես դեռահասության տարիքում սովորողներն անկառավարելի են և հաճախ կարող են դրսևորել 3-րդ աստիճանի վարք: Այստեղ է , որ զինղեկը գործի է դնում իր մանսնագիտաան հմտություններն ու հոգեխթանիչ աշխատանքներ իրականացնում:

Բերենք մեթոդական միավորման ներսում զինղեկի համագործակցության մի քանի իրավիճակային օրինակներ: Առարկայական մեթոդական միավորման նախագահը ներկայանում է «ՆԶՊ»-ի դասին, որպեսզի իրականացնի փոխադարձ դասալսում: Դասալսման նպատակը դասի տեսական և գործնական փուլերի փոխկապակցվածության և մեթոդների նպատակային կիրառության արձանագրումն է: Արդյունքում արձանագրվում է, որ դասի փուլերը տրամաբանորեն շաղկապված էին, գործնական հատվածին սովորողների մասնակցությունը համաչափ էր, բոլորն ակտիվ մասնակցում էին շարային պատրաստությանը, այլ խոսքով՝ դասը ծառայում էր նպատակին, և ուսուցիչը դասի ավարտին կարողացավ հասնել չափորոշչային պահանջներին: Այս պարագայում մեթոդմիավորման նախագահն իր արձանագրությունների մատյանում առանձնացնում է միայն մեթոդների բացակայությունը դասին: Զինղեկի հետ արդյունքների քննարկման ժամանակ առաջարկում է, որ վերջինս դասին ներառի մի շարք ակտիվ ու փոխգործուն մեթոդներ՝ դասի ընթացքում ժամանակ խնայելու և համաչափ սովորողներին ներգրավելուհամար: Մեթոդմիավորման նախագահը պետք է հետևողական լինի, որ արձանագրված խնդիրը ստանա համապատասխան լուծում, ուսուցիչը հասկանա՝որտեղ է իր բացթողումը և իրավիճակը շտկվի: Ստացվեց, որ մեթոդական միավորման նախագահը, պահպանելով մանկավարժական էթիկան, խնդրին տվեց համակարգային լուծում: Միավորման նախագահը զինղեկի հետ առանձին քննարկեց, վերլուծեց բացթողումները, սակայն դա չդիտարկվեց որպես խարան: Միավորման ներսում իրականացրած աշխատանքը նպաստեց, որ այլոց օրինակն ու սեփական վերլուծությունը համադրելով՝ զինղեկը հնարավորություն ունենա գործնականում հասկանալ իր սխալն ու լուծումներ գտնի:

Մեթոդական միավորման ներսում զինղեկը կարող է հանդես գալ զեկույցներով: Որպես մեթոդական զեկույցի թեմա կարելի է ընտրել, օրինակ՝ «Ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում», «Նախազորակոչային տարիքի սովորողների հետ տարվող դաստիարակչական աշխատանքը դպրոցում»:

Այս մեթոդական զեկույցներն այլ ուսուցիչների համար կարող են ունենալ լուսավորչական նշանակությունը, քանի որ կարող են պարունակել իրենց մեջ նեղ մասնագիտական բնագավառի տեղեկատվություններ: «Ձինղեկը պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և «Նախնական զինվորական պատրաստություն» (ՆԶՊ) առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան և ղեկավարում է ռազմական գործն ուսումնասիրող խմբակների աշխատանքը, ուսումնական հաստատության ղեկավարության և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ իրականացնում է սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը, պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և ՆԶՊ առարկայի չափորոշչին և ծրագրերին համապատասխան»[6]:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կարողունակությունների զարգացումն արդի կրթական պահանջների արտացոլանքն է: Ինչպես նաև արձանագրեցինք, որ ուսուցչի մասնագիտական որակների բարձրացման համար անգնահատելի է համագործակցությունը գործընկերների հետ՝ ինչպես ուղիղ, այնպես է առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում: Պակաս կարևոր չէ ուսուցիչների համագործակցությունը առարկաների ինտեգրման ժամանակ: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որի շրջանակներում մեկ հասկացության ուսուցման ժամանակ տեղի է ունենում մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ, որը նպաստում է ուսուցանվող նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը[7]:

---

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարություն որոշում 14 հոկտեմբերի 2010 թվականի n 1391-ն ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը

[7] https://vsu.am/grqer/2017/aprak/pnjoyantatevik.pdf Տ. Փնջոյան, «Ինտեգրումը կրթական գործընթացում», էջ 6:

Ինտեգրված դասի պլանավորումը ենթադրում է տարբեր առարկաների ուսուցիչների համագործակցություն: Ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Այսպես «ՆԶՊ»-ուսուցիչը լայն հնարավորություններ ունի համագործակցելու թե' բնագիտական առարկաների ուսուցիչների, թե' պատմագիտական, թե' մաթեմատիկայի, անգամ լեզուների հետ: Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության բարձրացման համատեքստում կարելի է իրականացնել բաց դասեր, դաս-զեկուցումներ, միջոցառումներ պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, ՀԵՊ, ֆիզիկական կուլտուրա ուսումնական առարկաների հետ: Գործնական դասերի, ռազմադաշտային պարապունքների ժամանակ մեծ է առնչությունը աշխարհագրության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի հետ, այդ թվում՝ մասշտաբի հաշվում , քարտեզի հետ աշխատանք, ՏՀՏ-ի կիրառում: Շարային պատրաստության ժամանակ ակնհայտ է կապը ֆիզկուլտուրայի հետ, ուստի ֆիզղեկի հետ համագործակցությունը ևս կարևոր է, որը նպատակ ունի բարձրացնել սովորողների ֆիզպատրաստությունը:

«Զինղեկը ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի հետ միասին կազմակերպում է բազմամարտի և քաղպաշտպանության նորմատիվների ցուցանիշների հանձնումը, սովորողներին մասնակից է դարձնում հրաձգության, ռազմակիրառական մարզաձևերի ու քաղպաշտպանության համայնքային, մարզային, հանրապետական մրցումներին, սպարտակիադաներին և այլ միջոցառումների[8]»

Ինտեգրված դասին նախապատրաստական գործունեության ընթացքում առանցքային նշանակություն ունեն ուսուցիչների համագործակցելու, իրարից սովորելու, ընդհանուր նպատակներ ու խնդիրնել գտնելու կարողությունները: Միջառարկայական կապերը դրդում են սովորողներին հետազոտական գործունեության, արթնացնում հետաքրքրություն առարկայի նկատմամբ, ուստի ուսուցիչները պետք է ավելի հաճախ դիմեն առարկայական ինտեգրմանը:

Այսպիսով, կարծում ենք, որ ինտեգրված դասերի կազմակերպման ընթացքը բավականաչափ արդյունավետ կարող է լինել մասնակից ուսուցիչների համար: Սա համագործակցման ու փորձի փոխանակման անմիջական գործընթաց է, որի ժամանակ բոլոր ուսուցիչները հավասարաչափ ջանք են գործադրում, որպեսզի ուսուցման գործընթացը լինի ասարդյունավետ: Կառուցողական համագործակցության արդյունքում թե' ուսուցիչները, թե սովորողները ընդարձակում

[8] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարություն որոշում 14 հոկտեմբերի 2010 թվականի n 1391-ն ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը:

են իրենց գիտելիքների պաշարը, ձեռք բերում նոր կարողություններ, համագործակցելու փորձառություն, ինչն անչափ կարևոր է, քանի որ համագործակցությունը ավելի է հեշտացնում դժվարությունների հաղթահարումը:

1.3 Ձինղեկների համագործակցության օրինակներ

Մեծ է նաև զինղեկի դերակատարումը գործընկերների հետ համագործակցության առումով: Ձինղեկը համագործակցում է ուսումնական հաստատության մյուս մանկավարժների, հոգեբանի, սովորողների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում, համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[9]: Անշուշտ ուսուցիչները՝ այդ թվում զինղեկը, տիրապետում է իր գործառույթների հիմնական շրջանակին՝ դասի ընթացքում բովանդակության և նպատակների ներկայացման, անցումային կետերի ազդանշման և հիմնական կետերի ամփոփման առումներով, այնուամենայնիվ, դա բավական չէ ուսուցման գործընթացն արդյունավետ ու ստացված համարելու համար:

Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների հաստատուն կազմի և սովորողների գործունեության կազմակերպման ձև: Այդ ձևում ներդրված են կրթական–դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատմամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ: «ՆԶՊ» առարկայի յուրաքանչյուր դաս իր ուրույն դերակատարումն ունի սովորողների հայրենաճանաչության, ընդհանուր ու համակաղմանի զարգացման համար, ուստի այս գործընթացում շատ կարևոր է դպրոց-բանակ կապի ապահովումը: Կրթությունը պետության

[9] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարություն որոշում 14 հոկտեմբերի 2010 թվականի n 1391-ն ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եվ նկարագրերը հաստատելու մասին:

կենսագործունեության հիմնասյուններից է: Կրթական գործընթացի միջոցով քաղաքացիական հանրությունը նպատակաուղղված կերպով փոխանցում է իր մշակութային ժառանգությունը՝ կուտակած գիտելիքները, արժեքները, հմտությունները նոր սերունդներին: Այդ իսկ պատճառով, որպես պետական ինստիտուտ, դպրոցը բանակի հետ նույն հարթության վրա է գտնվում:

Եթե կոնկրետ պատմական ժամանակահատվածում մարտունակ բանակը պետության առաջընթացի վկայությունն է և նրա արտաքին անվտանգության երաշխավորը, ապա դպրոցը նրա հենց ներուժն է և ապագայի երաշխիքը: Առանց երիտասարդ սերնդի կրթության ու դաստիարակության, առանց արժեքներ սերմանելու եւ գիտելիք հաղորդելու պետության մեջ չի կարող լինել գաղափարական զինվոր: Զինվորական կադրերն ու ժամանակակից սպառազինությունը նախ և առաջ ստեղծվում են ազգային դպրոցում սաներին գիտելիք, դաստիարակություն, հոգեբանական ու գաղափարական պատրաստություն տալու միջոցով: Դպրոցն է կերտում ապագա տնտեսագետին, արվեստագետին ու սպորտսմենին: Աշխարհահռչակ գիտնականի կամ սկզբունքային քաղաքական գործչի հաջողության և գործունեության արդյունավետության ուղին սկսվում է առաջին հերթին այս դարբնոցում: Հենց այստեղից է սկսվում նաև ազգ-բանակ միասնությունը: Այդ պատճառով կարևոր է նաև միջդպրոցական համագործակցությունը զինղեկների միջև: Կարելի է կազմակերպել ինտելեկտուալ վիկտորինաներ, հրաձգության, ֆիզպատրաստության մրցաշարեր: Զինղեկը համագործակցում է նաև զինկոմիսարիատների հետ: Այստեղ հաճախ են կազմակերպվում սեմինարներ և քննարկումներ զինղեկների մասնակցությամբ: «Զինղեկը ապահովում է շեֆություն ստանձնած զորամասերի, այլ ձեռնարկությունների, կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ՆԶՊ դասավանդման որակը բարելավելու նպատակով, աջակցում է զինկոմիսարիատին՝ պատանիներին զինվորական ուսումնական հաստատություններ ընդունվելը նախապատրաստելու համար, օգնում դասղեկներին նախապատրաստելու նախազորակոչային տարիքի պատանիների փաստաթղթերը և ապահովում նախազորակոչային հաշվառումը, նրանց կցագրումը զինկոմիսարիատին»[10]:

[10] https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարություն որոշում 14 հոկտեմբերի 2010 թվականի n 1391-ն ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը եվ նկարագրերը հաստատելու մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կրթության արդի պահանջներից է, որ ուսուցիչը՝ այդ թվում զիղեկն ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրատվածություն և մասնագիտական որակներ, կարևորի սովորելու և սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, ինքնակրթվի ու կատարելագործի իր կարողունակությունները: Այս համատեքստում անչափ կարևոր է համագործակցային առողջ ու անշահախնդիր հարաբերությունների հաստատումը գործընկերների հետ, ինչով էլ պայմանավորել էինք սույն հետազոտության արդիականությունը: Թեմայի ուսումնասիրության ընթացքում եկանք մի շարք եզրահանգումների, որոնք կամողջացնենք ստորև՝

- Զինղեկը պետք է բարձր պատասխանատվությամբ ձգտի մասնագիտական զարգացման, արդյունավետ համագործակցի գործընկերների հետ:
- Զինղեկը պարտավոր է անվերապահորեն կատարել իր մասնագիտական պարտականությունների՝ ձգտելով համագործակցել այլ ուսուցիչների, դպրոցի խորհրդակցական մարմինների հետ:
- Ցանկալի է, որ զինղեկը պահանջկոտ լինի սեփական անձի նկատմամբ և շարունակ ձգտի ինքնակատարելագործման, սա նոր որակի կրթության ցուցիչ է:
- Ուսումնական գործընթացի որակի բարելավման նպատակով զինղեկը պետք է անընդհատ կատարի մշտադիտարկում, ուսումնասիրի ոլորտի նորարարությունները, ուսուցման գործընթացում կատարի հետադարձ կապ և դրանից բխող ինքնանդրադարձ:
- Զինղեկը պետք է մշտապես համագործակցի զինկոմիսարիատների, այլ զինղեկների հետ, զարգացնի իր մասնագիտական հմտությունները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ուսուցիչների համագործակցության դերը՝ որպես կրթության որակի բարձրացման միջոց՝ կցանկանանք հանդես գալ մի քանի առաջարկություններով՝

- Կարելի է հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ, որտեղ զինղեկները հնարավորություն կունենան արտահայտվել, բարձրաձայնել առկա հիմնախնդիրները, բանակցել:
- Հարկավոր է մշակել արդյունավետ ռազմավարություն մեթոդական միավորման անդամների միջև աշխատանքն արդյունավետ կազմակերպելու, համագործակցային միջավայր ստեղծելու համար:
- Պետք է մեծացնել վերահսկողությունը դպրոցում դաստիարակչական աշխատանքների իրականացման նկատմամբ՝ այդ գործընթացում կարևորելով նաև զինղեկի ջանքերը:
- Զինղեկները հաճախ պետք է դպրոց հրավիրեն բարձրաստիճան զինվորականների, պատերազմի մազնակիցների, այլ զինղեկների՝ նպատակ ունենալով խթանել ռազմահայրենասիրական դաստիարակությունը դպրոցում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345
   ՀՀ հանրակրթության մասին օրենք:
2. http://zangak.am/pdf/Mank.mitq/2016/Mankavarzhakan-Mitq-2016-3-4.pdf
   «Մանկավարժական միտք» հանդես, Տ. Գրիգորյան, «Դասի նպատակի հիմնախնդիրը ժամանակակից մանկավարժության մեջ», Երևան, 2016:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=72808 ՀՀ կառավարություն որոշում 14 հոկտեմբերի 2010 թվականի n 1391-ն ՀՀ ընդհանուր ծրագրեր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը
4. https://vsu.am/grqer/2017/aprak/pnjoyantatevik.pdf Տ. Փնջոյան, «Ինտեգրումը կրթական գործընթացում»: